Ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման հարկային հաշիվ

Ա1801665213

# Հարկային հաշիվ
(ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | | [2] Սերիա | [3] Համար |
|---|---|---|---|---|
| 31 | Մարտ | 2018 թ. | Ա | 1801665213 |

| [4] Մատակարարման ամսաթիվ | | | Կարգը (անհրաժեշտության դեպքում վանդակում նշել «X») | հատուկ |
|---|---|---|---|---|
| 12 | Մարտ | 2018 թ. | | |

| Ճշգրտվող հաշվի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |
| Ճշգրտվող հաշվի դուրս գրման ամսաթիվ | |
| | |

| Պայմանագիր | [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
|---|---|---|
| | 12 Մարտ, 2018 թ | ԴԱ/365 |

[7]

[8]

[9]

[10] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

Ենթատիրույթի գրանցում

## Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի

| | |
|---|---|
| [11] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 4 1 1 2 2 0 7 |
| [12] Անվանումը | «ԱՐԱՆԵԱ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ) |
| [13] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 4 1 1 2 2 0 7 / 1 |
| [14] Բանկային տվյալները | ԱՐԴՇԻՆԲԱՆԿ ՓԲԸ "Արարատ" մասնաճյուղ — N 2474302219420000 |
| [15] Գտնվելու վայրը (հասցեն) | ԱՐԱՐԱՏ ԱՐԱՐԱՏ ԻՍԱՀԱԿՅԱՆ Փ. 32ա |
| [16] Լրացուցիչ տվյալներ | |

## Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի

| | |
|---|---|
| [17] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 4 0 0 0 0 8 2 |
| [18] Անվանումը | ՀՀ ԿՐԹ ԵՎԳԻՏ.ՆԱԽԱՐԱՐ ԱՐԱՐԱՏԻՊԵՏ.ՔՈԼԵՋ Պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ) |
| [19] Բանկային տվյալները | Հայէկոնոմբանկ, Արարատ մ/ճ — N 1150012303390100 |
| [20] Գտնվելու վայրը (հասցեն) | ԱՐԱՐԱՏ Խանջյան 67 |
| [21] Լրացուցիչ տվյալներ | |

| [22] Ում միջոցով | Անուն, ազգանուն | | |
|---|---|---|---|
| | Լիազորագիր | Համար | |
| | | Ամսաթիվ | |

[23] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

| N | Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (բովանդակությունը) | Չափման միավորը | Ընդհանուր ծավալը (ժամանակաշրջանը) | Միավորի գինը | Արժեքը | ԱԱՀ դրույքաչափը (%) | ԱԱՀ գումար | Ընդամենը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Ենթատիրույթների գրանցում 1 տարի | հատ | 1 | 10000 | 10000 | 20 | 2000 | 12000 |
| Ընդամենը | | | | | 10000 | X | 2000 | 12000 |

Դուրս գրող՝ POGHOSYAN GRIGOR 3108900684

անունը, ազգանունը

31/03/2018 17:24:25

*Ստացող՝ HOVHANNISYAN SEROZH 1801920419

անունը, ազգանունը

04/04/2018 11:10:58

պայմ. -26.01.18

ընդ. 04.04.18

7112

5213

04239

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԴԱ/294

## Դոմենային անվան գրանցման ծառայություն

ք.Արարատ 26.01.2017թ.

«ԱՐԱՆԵԱ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ Կատարող, ի դեմս՝ տնօրեն Անդրանիկ Մինասյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, և ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ, ի դեմս՝ տնօրեն Էլլա Գասպարյանի, այսուհետ՝ Պատվիրատու, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

*1.Պայմանագրի առարկան*

1.1. Համաձայն սույն պայմանագրի Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել հետևյալ ծառայությունը՝ հաշվեգրել «Ինտերնետ Հանրություն» ՀԿ-ի (այսուհետ՝ ԻՀ) տվյալների շտեմարանի .AM տիրույթում դոմենային անուն, հետագայում՝ «Ծառայություն», իսկ Պատվիրատուն պարտավորվում է վարձատրել այդ Ծառայության դիմաց:

*2.Ծառայության մատուցումը*

2.1. Դոմենային անունը գրանցելու համար ստուգվում է Պատվիրատուի նախընտրած դոմենային անվան գրանցման հնարավորությունը:

2.2. Եթե Պատվիրատուի նախընտրած դոմենային անունը ազատ է գրանցման համար, ապա Պատվիրատուն լրացնում է Կատարողի կողմից սահմանած Հավելվածը և ներկայացնում այն Կատարողին (նշված գործընթացը կարող է իրականացվել նաև առցանց եղանակով գրանցող կազմակերպության կայքի միջոցով), ինչի արդյունքում տվյալ դոմենային անունը դառնում է անհասանելի այլ անձանց կողմից գրանցելու համար (այսուհետ՝ դոմենային անվան վավերացում):

2.3. Դոմենային անվան վավերացման պահից 15 (տասնհինգ) օրվա ընթացքում Պատվիրատուն պարտավոր է կատարել Հավելվածով սահմանված վճարումը, հակառակ դեպքում՝ տվյալ դոմենային անվան գրանցում տեղի չի ունենում, և տվյալ դոմենային անունը հասանելի է դառնում այլ անձանց կողմից գրանցելու համար:

2.4. Հավելվածում նշված դոմենային անունը գրանցվում է վավերացումից ոչ ուշ, քան 15 (տասնհինգ) օրացուցային օրվա ընթացքում Հավելվածով նախատեսված վճարումը կատարելուց հետո, ընդ որում՝ գրանցման օր է համարվում դոմենային անվան վավերացման ամսաթիվը:

2.5. Առաջին անգամ Կատարողից Ծառայություններ պատվիրելու դեպքում Հավելվածի հետ միասին Պատվիրատուն ստորագրում է նաև ծառայությունների վճարովի մատուցման Պատվերը կամ առցանց եղանակով՝ Կատարողի կայքի միջոցով կատարում է Պայմանագրի կատարմանն ուղղված գործողություններ:

2.6. Դոմենային անվան գրանցման Ծառայությունը Կատարողի կողմից համարվում է պատշաճ մատուցված և Պատվիրատուի կողմից ընդունված, երբ դոմենային անունը մուտքագրվում է Կատարողի տվյալների շտեմարանում:

2.7. Կատարողն ապահովում է դոմենային անվան գրանցման վերաբերյալ տեղեկությունների փոխանցում Իներնետ ՏեխնոլոգիաներիԿենտրոն ՍՊԸ-ի https://www.amnic.net/whois/ տեղեկատվական բնույթ ունեցող կայք իր տվյալների շտեմարանում գրանցման հետ զուգընթաց:

3. Դոմենային անվան գրանցման անհնարինությունը և արդեն գրանցված անվան գրանցման դադարեցումը

3.1.Կատարողն իրավունք է վերապահում չմատուցել կամ միակողմանիորեն դադարեցնել Ծառայությունը դոմենային անվան համար իր կողմից վարվող հանրությանը հասանելի տվյալների շտեմարանում հետևյալ դեպքերում.

3.1.1.Նույնական դոմենային անուն արդեն իսկ գրանցվել է մեկ այլ անձի կողմից:

3.1.2.Նույնական դոմենային անվան համար գրանցման հայտ (վավերացում) արդեն իսկ ներկայացվել է:

3.1.3.Երկու կամ ավել անգամ վավերացված դոմենային անունը առանց հետագա գրանցման և մինչև Պատվիրատուի կողմից Հավելվածով սահմանված կարգով վճարում կատարելը տվյալ դոմենային անունը գրանցվել է երրորդ անձի կողմից:

3.1.4.Դոմենային անվան գրանցումը Պատվիրատուի կողմից հակասում է ԻՀ ՀԿ կողմից սահմանված կանոններին (https://www.amnic.net/policy/am/):

3.1.5.Դոմենային անվան գրանցումը կամ օգտագործումը հակասում է ՀՀ օրենսդրությանը:

3.1.6.Առկա է ՀՀ դատական մարմնի որոշում և դրա հիման վրա դատական ակտերի հարկադիր կատարման մասին որոշում, արբիտրաժային տրիբունալի որոշում, վարչական ակտ, Կատարողի կողմից կատարման համար պարտադիր այլ նորմատիվ կամ անհատական ակտ, որը դադարեցնում է տվյալ դոմենային անվան գրանցումը

կամ օգտագործումը որևէ կերպով:
3.1.7.Առկա է ՀՀ դատական մարմնի որոշում որով տվյալ դոմենային անվան գրանցման կամ օգտագործման իրավունքը տրամադրված է այլ անձի:
3.1.8.Դոմենային անվան գրանցման համար տրամադրված փաստաթղթերը կամ տվյալները կեղծ են կամ թերի:
**3.1.9.Դոմենային անվան մեջ օգտագործված է գռեհիկ բառապաշար:**
3.1.10.Դոմենային անունը օգտագործվել է, մասնավորապես, չպահանջված էլեկտրոնային հաղորդակցության (սփամի) տարածելու համար, կամ այլ անօրինական նպատակներով, որևէ ռասայական, ազգամիջյան, կրոնական կամ էթնիկ չափանիշներով գժտության հրահրման համար, ահաբեկչական և ծայրահեղական ուղղության գործունեության խթանման և ուժի կիրառման քարոզչության համար, թմրանյութերի, դրանց պատրաստման և շրջանառության մեթոդների տարածման համար, պոռնոգրաֆիկ նյութերի գովազդման և տարածման համար, անօրինական միգրացիայի և մարդկանց առևտուր իրականացնելու համար, ֆինանսական հանցագործությունների կազմակերպման, կիբերհանցագործություններ իրագործելու կամ դրանց խթանման համար:
3.1.11.Պատվիրատուի կողմից սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների այլ էական խախտումների դեպքում:
3.2.Կետ 3.1.10.-ում նկարագրված չափանիշների առկայությունը հաստատվում է ԻՀ ՀԿ համապատասխան աշխատանքային խմբի եզրակացությամբ, և Պատվիրատուն ընդունում է, որ այդպիսի որոշման առկայությունը բավարար հիմք է համապատասխան գրանցումը դադարեցնելու համար:
3.3.Այն դեպքում, երբ դոմենային անունը չի կարող գրանցվել սույն Հատուկ Պայմանների 3.1.1-3.1.5. կետով նախատեսված հիմքով, Պատվիրատուի պահանջով տվյալ դոմենային անվան գրանցման համար վճարված գումարները վերադարձվում են:
3.4.Կատարողն իրավասու է միակողմանի հրաժարվել դոմենային անվան գրանցումից սույն Հատուկ Պայմանների 3.1.6-3.1.11 կետով նախատեսված հիմքերով: Այս դեպքում տվյալն դոմենային անվան համար վճարված գումարները չեն վերադարձվում:
**4.Դոմենային անվան գրանցման դեպքում Պատվիրատուն համաձայնվում է, որ**
4.1.Իր անունը, ազգանունը, իր կողմից տրամադրված բնակության հասցեն, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն, ինչպես նաև գրանցված դոմենային անունը տեղադրվի Կատարողի կողմից վարվող հանրությանը հասանելի տվյալների շտեմարանում:
4.2.Իր անունը, ազգանունը, իր կողմից տրամադրված բնակության հասցեն, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն տեղադրվի և պահպանվի «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի կողմից վարվող .AM տվյալների շտեմարանում անորոշ ժամանակ:
4.3.Վճարում կատարելու համար ստանալու է հիշեցումներ դոմենային անվան գրանցման ժամկետի ավարտի մասին իր կողմից տրամադրված հեռախոսահամարի վրա կարճ հաղորդակցության (SMS) միջոցով կամ իր կողմից տրամադրված էլեկտրոնային փոստին ուղղված նամակով:
**5.Վեճերի լուծման կարգը**
5.1.Սույն Պայմանագրի կնքման, կատարման կամ մեկնաբանման, ինչպես նաև խախտման, դադարման կամ անվավերության հետ կապված ցանկացած վեճ (այսուհետ՝ «Վեճ») պետք է վերջնականորեն լուծվի արբիտրաժի միջոցով՝ ԷյԴիԱր Փարթներս ՍՊԸ-ի ԷյԴիԱր Կենտրոնի կողմից՝ համաձայն ԷյԴիԱր Կենտրոնի Մեդիացիայի և Արբիտրաժի Կանոնների («ԷյԴիԱր Կանոններ»): Կողմերը պարտավորվում են կատարել և ենթարկվել վերոհիշյալ ԷյԴիԱր Կանոններին: Արբիտրաժը կիրականացվի երեք արբիտրների կազմով՝ ընտրված համաձայն վերոհիշյալ Կանոնների: Արբիտրաժի վայրը՝ քաղաք Երևան, Հայաստանի Հանրապետություն, արբիտրաժի լեզուն՝ հայերեն: ԷյԴիԱր Կանոնների համաձայն իրականացված արբիտրաժի վճիռը վերջնական է, պարտադիր և կիրառման ենթակա Կողմերի կողմից և պարտադիր կատարման համար կարող է հանձնվել ցանկացած իրավասու դատարան:
5.2.Արդեն իսկ գրանցված դոմենային անվան համար Ծառայությունը դադարեցնելու կամ կասեցնելու կապակցությամբ (հետևանքով) առաջացած ցանկացած վեճ, որը չի լուծվել բանակցությունների միջոցով, պետք լուծվի բացառապես ԷյԴիԱր Փարթներս ՍՊԸ-ի ԷյԴիԱր Կենտրոնի կողմից՝ համաձայն ԷյԴիԱր Կենտրոնի Մեդիացիայի և Արբիտրաժի Կանոնների («ԷյԴիԱր Կանոններ»)՝ հիմք ընդունելով ինչպես ՀՀ օրենսդրությունը և Կողմերի միջև առկա պայմանագիրը, այնպես էլ հաշվի առնի Մտավոր սեփականության համաշխարհային

կազմակերպության (ՄՍՀԿ) դոմենային անվանումների հետ կապված վեճեր քննող արբիտրաժի կողմից (www.wipo.int/amc/en/domains) կայացված որոշումները (եթե այդպիսիք առկա են): Կողմերը պարտավորվում են կատարել և ենթարկվել վերոհիշյալ ԷյԴիԱր Կանոններին: Արբիտրաժը կիրականացվի երեք արբիտրների կազմով՝ ընտրված համաձայն վերոհիշյալ Կանոնների: Արբիտրաժի վայրը՝ քաղաք Երևան, Հայաստանի Հանրապետություն, արբիտրաժի լեզուն՝ հայերեն: ԷյԴիԱր Կանոնների համաձայն իրականացված արբիտրաժի վճիռը վերջնական է, պարտադիր և կիրառման ենթակա Կողմերի կողմից և պարտադիր կատարման համար կարող է հանձնվել ցանկացած իրավասու դատարան:

5.3.ՄՍՀԿ-ի դոմենային անվանումների հետ կապված վեճեր քննող արբիտրաժի կողմից կայացված որոշման հիմքով «Արանեա» ՍՊԸ և (կամ) «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ի կողմից որևէ դոմենային անվան համար Ծառայության դադարեցնելու կամ կասեցնելու պատճառով առաջացած որևէ վեճ պետք է լուծվի բացառությամբ բացառապես ԷյԴիԱր Փարթներս ՍՊԸ-ի ԷյԴիԱր Կենտրոնի կողմից՝ համաձայն ԷյԴիԱր Կենտրոնի Մեդիացիայի և Արբիտրաժի Կանոնների («ԷյԴիԱր Կանոններ»)՝ հիմք ընդունելով ՀՀ օրենսդրությունը և Կողմերի միջև առկա պայմանագիրը և հաշվի առնել ՄՍՀԿ-ի դոմենային անվանումների հետ կապված վեճեր քննող արբիտրաժի կողմից կայացված վիճարկվող դոմենային անվան վերաբերող համապատասխան որոշումը: : Արբիտրաժի վայրը՝ քաղաք Երևան, Հայաստանի Հանրապետություն, արբիտրաժի լեզուն՝ հայերեն ԷյԴիԱր Կանոնների համաձայն իրականացված արբիտրաժի վճիռը վերջնական է, պարտադիր և կիրառման ենթակա Կողմերի կողմից և պարտադիր կատարման համար կարող է հանձնվել ցանկացած իրավասու դատարան:

5.4.«Արանեա» ՍՊԸ-ն և «Ինտերնետ տեխնոլոգիաների կենտրոն» ՍՊԸ-ն որևէ պատասխանատվություն, այդ թվում ֆինանսական (վնասի հատուցման և այլն) չեն կրում դոմենային անունը չգրանցելու, գրանցումը դադարեցնելու, կասեցնելու կամ սույն պայմանագրով նախատեսված Ծառայությունը չմատուցելու համար:

5.5. Սույն Հատուկ Պայմաններում եզրույթներն ունեն նույն նշանակությունը ինչ ԸԴՊ-ում:

ՀԱՎԵԼՎԱԾ ԹԻՎ 1

ք.Արարատ

«26» 01. 2017թ.

### .AM տիրույթում դոմենային անվան գրանցման ծառայություն մատուցելու համար

**«Արանեա»** ՍՊԸ-ն, այսուհետ՝ Կատարող, ի դեմս՝ ընկերության տնօրեն Անդրանիկ Մինասյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից և ՀՀ ԿԳՆ **«Արարատի պետական քոլեջ»** ՊՈԱԿ, հետագայում՝ «Պատվիրատու», ի դեմս տնօրեն՝ Էլլա Գասպարյանի, մյուս կողմից, կնքեցին սույն պատվերը հետևյալի մասին.

**1.Ծառայությունը՝**

1.1 Կատարողը իրականացնում է իր տվյալների շտեմարանում .AM տիրույթում դոմենային անվան գրանցում:

2.Ծառայության գինը՝

2.1 Մեկ դոմենային անվան մեկ գրանցման գինը կազմում է՝ 12000*(տասներկու հազար) ՀՀ դրամ՝ներառյալ բոլոր կիրառվելիք հարկերը*:

**3.Վճարման ժամկետը և կարգը**

3.1. Սույն Հավելվածի երկկողմանի ստորագրման պահից 5 (հինգ) օրվա ընթացքում, բայց ոչ ավել, քան դոմենային անվան վավերացումից հետո 15 (տասնհինգ) օրվա ընթացքում, Պատվիրատուն պարտավոր է վճարել 2.1. կետում նախատեսված Ծառայության գինը: Սույն կետում նշված ժամկետում Ծառայության գինը չվճարելու դեպքում դոմենային անվան գրանցում տեղի չի ունենում:

4..AM տիրույթում դոմենային անունը գրանցվում է վավերացումից ոչ ուշ, քան 15 (տասնհինգ) օրացուցային օրվա ընթացքում Հավելվածով նախատեսված վճարումը կատարելուց հետո, ընդ որում՝ գրանցման օր է համարվում դոմենային անվան վավերացման ամսաթիվը:

5.Սույն Հավելվածում տերմիններն/եզրույթներն ունեն նույն նշանակությունը ինչ ԸԴՊ-ում:

6.AM տիրույթում գրանցվող դոմենային անունը apq.am

7.Առաջնային DNS հասցե՝ 178.219.48.48 , Երկրորդային DNS հասցե՝ 178.219.48.78

8.Սույն Հավելվածը ստորագրվում է հայերեն լեզվով երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9.Կողմերի հասցեներն ու բանկային վավերապայմանները՝

| | |
|---|---|
| Կատարող՝ «Արանեա» ՍՊԸ | Պատվիրատու՝ ՀՀ ԿԳՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ |
| **Իրավաբանական հասցե՝** ք.Արարատ,Իսահակյան 32ա | **Իրավաբանական հասցե՝** ք.Արարատ, փ.Խանջյան,շենք 67 |
| Գործունեության հասցե՝ ք.Արարատ, Իսահակյան32/2 | Գործունեության հասցե՝ ք.Արարատ, փ.Խանջյան,շենք 67 |
| Հեռախոս՝ 0234-4-10-19, 060-656-656 | Հեռախոս՝ 37499972747/37423444101/37455665252 |
| էլ. փոստ՝ info@aranea.am | էլ. փոստ՝ araratcollege@mail.ru |
| Հ/հ՝ 2474302219420000 | Հ/հ՝ 1150012303390100 |
| «Արդշինբանկ» ՓԲԸ, Արարատ մ/ճ | Հայբիզնեսբանկի Արարատի մ/ճ |
| ՀՎՀՀ՝ 04112207 | ՀՎՀՀ՝ 04000082 |
| Տնօրեն՝ Անդրանիկ Մինասյան | Տնօրեն՝ Էլլա Գասպարյան |
| (ստորագրություն) | (ստորագրություն) |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Այս Հավելվածը ստորագրելով՝ Պատվիրատուն հավաստում է, որ կարդացել և ամբողջությամբ ընդունում է սույն Հավելվածը, համապատասխան Ծառայությունների Հատուկ Պայմանները, Գնացուցակը, որոնք բոլորը միասին կազմում են Պայմանագիրը:*